

Երևանյան անշարժ գույքի շուկան 2009թ.-ի առաջին եռամսյակում

2009 թ.-ի առաջին քառորդն անցավ առանց բնակարանների գների և վերջիններիս նակտամբ կատարված առքուվաճառքի գործորքների քանակի որևէ նշանակալի փոփոխության: Մայրաքաղաքում վաճառված բնակարանների առքուվաճառքների պայմանագրային գների վերլուծության արդյունքում հայտնի է դարձել, որ 2009թ.-ի առաջին եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում 1 քմ բնակելի տարածքի միջին գինը հասել է 280,600 դրամի, որի ցուցանիշը 2008թ.-ի առաջին եռամսյակի համեմատ ցածր է 2%-ով, իսկ չորրորդ եռամսյակի համեմատ՝ 5.5%-ով: Ըստ վիճակագրական տվյալների վերլուծության՝ 2009թ.-ի առաջին

քառորդում 2008թ.-ի առաջին և չորրորդ եռամսյակների համեմատությամբ բնակարանների գները նվազել են Երևանի համարյա բոլոր համայնքներում՝ բացառությամբ Կենտրոնի: Կենտրոն համայնքում 2009թ.-ի առաջին եռամսյակում բնակարանների գները 2008թ.-ի առաջին և չորրորդ եռամսյակների համեմատ աճել են համապատասխանաբար 5.7%-ով և 1.1%-ով: Կարող ենք ասել, որ 2009թ.-ի առաջին եռամսյակի մաքսիմալ նվազումը 2008թ.-ի առաջին եռամսյակի համեմատ հաղիպել է Մալաթիա-Սեբաստիա համայնքում 7%-ով, իսկ մինիմալը՝ Նուբարաշենում, այնտեղ աճել է 4.4%:


Համայնքներ	1-ին եռամս 2008	1-ին եռամս 2009	4-րդ եռամս 2008
Կենտրոն	472,400	499,200	493,900
Արաբկիր	387,600	365,000	398,300
Զեյթուն	298,200	283,900	306,600
Նոր-Նորք	259,000	251,400	269,100
Շենգավիթ	269,200	254,200	277,400
Դավթաշեն	276,900	278,600	300,500
Մալաթիա	255,500	237,900	255,900

Իսկ մաքսիմալ նվազումը 2008թ.-ի չորրորդ եռամսյակի համեմատ տեղի է ունեցել Արաբկիր Համայնքում՝ 8%-ով, իսկ մինիմալ նվազումը եղել է Էրեբունիում՝ 1%:


Վարձակալության հատուկ առաջարկներ Պիկ Ռիելթիի կողմից



▲ Աննախաղեպ, երկհարկանի, 160քմ ընդհանուր մակերեսով բնակարան մայրաքաղաքի սրտում: Բնակարանը նախագծված է ժամանակակից ոճով և հայկական ճարտարապետական տարրերով: Յուրաքանչյուր հարկում տեղադրված է անվտանգության համակարգ և սենսորային լույս: Վայելեք հիանալի տեսարան ընդարձակ բաց պատշգամբից:



▲ Հիանալի նախագծով, գերազանց վերանորոգված և կահավորած, 102 քմ ընդհանուր մակերես ունեցող երեքսենյականոց բնակարան Մայաթ-Նովա փողոցի վրա: Այն առանձնանում է իր ընդարձակ և լուսավոր սենյակների ժամանակակից ոճով: Բնակարանը ապահովված է ջեռուցմամբ, առկա է օդորակիչ:



▲ Առանձնահատուկ, 200քմ ընդհանուր մակերեսով երկհարկանի բնակարան Հանրապետության Հրապարակի մոտակայքում: Ամբողջովին կահավորված և վերանորոգված բնակարանում Ձեզ սպասում է ընդարձակ և լուսավոր երեք սենյակների հարմարավետությունը: Բնակարանում տեղակայված է ջեռուցման և օդորակման համակարգ:

